ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄ

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոցի շրջանավարտների որակավորման քննությունների ամփոփման անհրաժեշտությունը,

նկատի ունենալով առարկայական քննական հանձնախմբերի անդամների կողմից որակավորման քննության գրավոր առաջադրանքները ստուգելու հանգամանքը,

հաշվի առնելով որակավորման քննության արդյունքներն ըստ ծածկագրերի գնահատված լինելու, ինչպես նաև ծածկագրերին համապատասխանող հավակնորդների անուն, ազգանունների ցուցակները կնքված արկղերում տեղադրված լինելու հանգամանքը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 45.11-րդ հոդվածների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 07.04.2018թ. թիվ 7/12-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգի 93-րդ կետի պահանջներով,

ՈՐՈՇԵՑ՝

1. Գնահատել դեոնթոլոգիայի մոդուլի գրավոր առաջադրանքները՝ համաձայն հավելված 1-ի:

2. Գնահատել քրեական մոդուլից միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կազմելու վերաբերյալ գրավոր առաջադրանքները՝ համաձայն հավելված 2-ի:

3. Գնահատել քաղաքացիական մոդուլից հայցադիմում կազմելու վերաբերյալ գրավոր առաջադրանքները՝ համաձայն հավելված 3-ի:

4. Գնահատել քրեական մոդուլից դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելու վերաբերյալ գրավոր առաջադրանքները ՝ համաձայն հավելված 4-ի:

Որոշում N 08-01-Ա
ք. Երևան
21 նոյեմբերի 2018թ.

5. Գնահատել քաղաքացիական մոդուլից վերաքննիչ բողոք կազմելու վերաբերյալ գրավոր առաջադրանքները՝ համաձայն հավելված 5-ի:

6. Տեղադրել սույն որոշման հավելվածները Պալատի կայքում և փակցնել՝ Պալատի 4-րդ հարկում գտնվող ցուցատախտակի վրա:

7. 2018թ. նոյեմբերի 21-ին ժամը 17^{30}-ին ք.Երևան, Զաքյան 7-2 հասցեում գտնվող Պալատի շենքի 4-րդ հարկի մեծ դահլիճում բացել կնքված արկղերը և հանել ծածկագրերի թերթիկները:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի որակավորման
հանձնաժողովի նախագահ՝ Արա Զոհրաբյան

Որոշում N 08-01-Ա
ք. Երևան
21 նոյեմբերի 2018թ.